

Միջնաժամկետ ծրագիր

2020-2022 թթ.

Հասարակության իրազեկման և տեղեկատվության ոլորտում

Ներկա իրավիճակը

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեն լայնածավալ աշխատանք է կատարում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, պետական հաշվառման, կադաստրային գնահատման, քարտեզագրման, գեոդեզիայի, գնահատման, հողաշինարարության ոլորտներում:

Կարևորելով գործունեության թափանցիկության ապահովումը, Կադաստրի պետական կոմիտեի բաց և հրապարակային աշխատանքը, համակարգում բարեփոխումների և մյուս հարցերի վերաբերյալ բնակչության և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների իրազեկումը՝ Կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը 2020-2022 թթ. ևս նախատեսում է իրականացնել Կոմիտեի ընթացիկ և ծրագրային աշխատանքների լուսաբանման և հասարակության իրազեկման օպերատիվ և որակյալ գործունեություն:

Լրատվության միջոցներով Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պատասխանատուների պարբերական ելույթների ու պարզաբանումների նպատակը Կոմիտեի գործառույթների լուսաբանումն է, սեփականատերերի և օգտագործողների՝ ընթացիկ և ծրագրային աշխատանքների իրազեկումը, Կոմիտեի գործունեությունն առավել մատչելի, պարզ և թափանցիկ դարձնելը:

Լրատվամիջոցներում կշարունակվեն պարբերաբար տպագրվել երկրի անշարժ գույքի շուկայի վերլուծությունները (ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան): Կադաստրի գրասենյակների ծառայությունները մեկ «տեղում» պարզ և մատչելի ներկայացնելու համար պարբերաբար կպատրաստվեն և կթողարկվեն ծալաթերթեր (ֆլայերներ), որոնցում հստակ և հակիրճ նկարագրված կլինեն նաև այս ոլորտում քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները:

«Նոր կադաստրի» գաղափարին առնչվող բոլոր կարևոր ծրագրերը (այդ թվում՝ Ինտեգրված կադաստրի ստեղծումն ու գործարկումը, Հասցեների միասնական ռեգիստրի ստեղծումն ու գործարկումը, ամբողջովին առցանց, անթուղթ և ինքնաշխատ կադաստրին անցնելը, որոնք բոլորն էլ ընդգրկված են Կոմիտեի հնգամյա ծրագրում) ոչ միայն պարբերական լուսաբանման կարժանան, այլև յուրաքանչյուր կարևոր փուլի ավարտին կարճ ֆիլմեր կպատվիրվեն այդ թեմաներով:

Կարճ ֆիլմ կպատվիրվի նաև ամբողջ Հանրապետության օդալուսանկարահանման թեմայով, որում նաև կբացատրվի աշխատանքի կարևորությունը՝ երկրատեղեկատվական տվյալները ճշգրտելու գործում, ինչն իր հերթին ահռելի մեծ նշանակություն կունենա հատկապես երկրի տնտեսության համար:

2019 թվականին պատվիրվել է երկու կարճ ֆիլմ՝ համակարգի գործառույթներն ու բարեփոխումները մատչելի և ազդեցիկ ներկայացնելու համար: Դրանք պատրաստ կլինեն 2019 թ. մայիս ամսվա վերջին: 2018 թ. ստեղծվել և տարբեր եղանակներով գովազդվել է Կոմիտեի նոր տարբերանշանը՝ կիրառական տարբեր ձևաչափերով: Նախապատրաստվում են 3 տեսակի ծալաթերթեր՝ Կոմիտեի բարեփոխումների և կադաստրային ծառայությունների վերաբերյալ:

Գործում է ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական կայքէջը, որը ժամանակի պահանջներին համապատասխանեցման և թարմացման փուլում է: Կայքէջի «Նորություններ» բաժինը վարում է (սկսած տեքստերի և լուսանկարների պատրաստումից մինչև այդ նյութերի տեղադրումը) Կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը: Բաժինը նույնկերպ ստեղծել և վարում է Կոմիտեի հարթակները սոցցանցերում (միայն Ֆեյսբուքի էջում Կոմիտեն 6 ամսում մոտ 6000 հավանում ունի, շաբաթական դիտումների թիվը՝ 25 - 35 հազար) : Հավանումների թիվը (ինչը նշանակում է հնարավոր լսարան) մեծացնելու համար սոցհարթակներին գովազդային վճարումներ են արվում: Գովազդ է տեղադրվում նաև տեղեկատվական այնպիսի միավորների վրա, որոնք ֆինանսական մուտքեր են ենթադրում:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը շահառու խմբերի իրազեկման մակարդակի բարձրացման աշխատանքի շրջանակում կշարունակի նաև

խորհրդատվության տրամադրումը Ֆեյսբուքով (բաժնի աշխատակիցները մասնագետներին են փոխանցում քաղաքացիների հարցերը և քաղաքացիներին՝ մասնագետների պատասխանները): Սոցցանցերում քաղաքացիների արձագանքի միջոցով դիտարկվում է նաև գրասեյակների աշխատանքը, դժգոհությունները փոխանցվում են համապատասխան աշխատակիցներին և ղեկավարությանը, արդյունքն ու լուծումները՝ քաղաքացիներին:

Նպասակը

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կարևորագույն խնդիրներից են իրականացվող աշխատանքների թափանցիկության և մատչելիության ապահովումը, բաց և հրապարակային աշխատանքը, ինչպես նաև բնակչության և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների իրազեկումը, հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը: Ծրագրի իրականացումը կնպաստի այնպիսի հարցերի լուծումներ գտնելուն, ինչպիսիք են՝ հողի շուկայի կայացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումն ու զարգացումը, հողի շուկայի և հողի գրավի գործունեության արդյունավետ մեխանիզմների գործարկումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ համագործակցությունը, անշարժ գույքի գրանցման մեխանիզմների ծախսատարության նվազեցումը, էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացմանը, էլեկտրոնային կադաստրի վարման կայացումը, զարգացումը և արդիականացումը, հիփոթեքային վարկավորման հասանելիությունը և հիփոթեքի շուկայի զարգացումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը:

Միջնաժամկետ ծրագրերով իրականացվող կարճ ֆիլմերի թողարկումը կնպաստի հրապարակայնությանն ու բնակչության տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, հանրության առավել լայն զանգվածներին իրազեկ կղարձնի համակարգում հեղափոխական փոփոխություններին, որոնք իրենց հերթին նաև կոչված են բարձրացնելու համընդհանուր վստահությունը Կադաստրի համակարգի հանդեպ, ինչպես նաև իրենց իրավունքներին և պարտականություններին:

Միջոցառումները

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» և «Զանգվածային լրատվության մասին» օրենքներով նախատեսված կարգերին համապատասխան, անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Կոմիտեի ղեկավարի հարցազրույցների, ասուլիսների և մամուլի, զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում,
- անհրաժեշտ տեղեկությունների և նյութերի ստացում Կոմիտեի ստորաբաժանումներից,
- մշակվող իրավական ակտերի նախագծերի պատճենների հավաքագրում, ինչպես նաև իրավական ակտերի նախագծերի լուսաբանում,
- Կոմիտեի աշխատանքի լուսաբանման համար ասուլիսների և ճեպագրույցների անցկացում,
- Կադաստրային ծառայությունների, Կոմիտեի կարևոր բարեփոխումների, քաղաքացիների իրավունքների մասին պատմող ծալաթերթերի պատրաստում և տպագրում,
- Կոմիտեի կարևորագույն ծրագրերի և բարեփոխումների մասին կարճ ֆիլմերի պատվիրում և թողարկում,
- Կոմիտեի աշխատանքի իրազեկման լսարանի մեծացում (ոչ միայն սոցիալական, այլև երբեմն նաև վճարովի գովազդի միջոցով):

Ակնկալվող արդյունքը

Աշխատանքի անվանումը	Նախնական գնահատականը (դրամ)*			
	2020-2022 թթ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.

Կարճ ֆիլմերի պատվիրում	6 մլն.	2 մլն., որից՝ I եռամսյակ 500 հազար -- II 500 հազար -- III 500 հազար -- IV 500 հազար	2 մլն.	2 մլն.
Ծավաթերթերի պատվիրում	3 մլն.	1 մլն., որից I եռամսյակ 250 հազար -- II 250 հազար	1 մլն.	1 մլն.

		-- III 250 հազար -- IV 250 հազար		
Գովազդի գումար	1 մլն. 800 հազար	600 հազար, որից I եռամսյակ 150 հազար -- II 150 հազար -- III 150 հազար -- IV 150 հազար	600 հազար	600 հազար
Ընդամենը	10 մլն. 800 հազար	3 մլն. 600 հազար	3 մլն. 600 հազար	3 մլն. 600 հազար

Տեղեկատվության և

հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

04.04.19 թ.

Ռ. Խաչատրյան